ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

30.04. 2016թ. Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան
Քարտուղար Ա. Սարիբեկյան
Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյան, Ա. Պոտոսյան, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Գ. Սիրոյանը, Հ. Ազիզյանը, Մ. Սարուխանյանը, Լ. Մելիքջանյան Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Հ. Քարտաշյանը, ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը, Ս. Սաֆարյանը և Ն. Մխիթարյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի միջնաժամկետ 2016-2018 թթ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց -պլանի հաստատման մասին:
/Զեկ Ն. Խուդավերդյան/
2.Քննարկել և հաստատել ֆակուլտետի մասնագիտությունների 2016-2020 ուս. տարվա ուսումնական պլանները:
/Զեկ Հ. Մարզպանյան/
Զեկ. Գ. Հովհաննիսյան/
3.Քննարկել և հաստատել ֆակուլտետի մասնագիտությունների 2016-2017 ուս. տարվա ուսումնական աշխատանքային պլանները:
/Զեկ. Հ. Մարզպանյան/
/Զեկ. Գ. Հովհաննիսյան/
4.Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:
1.Լսեցին - Ն. Խուդավերդյանին

Ն. Խուդավերդյանը ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի միջնաժամկետ 2016-2018 թթ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց -պլանի նախագիծը:

2016-2018 միջնաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցի - պլանի նախագիծը կազմվել է հիմք ընդունելով 2016-2020 ԵՊՀ Իմ ռազմավարական ծրագիրը: Ն. Խուդավերդյանը ներկայացրեց ֆակուլտետի միջնաժամկետ զարգացման ռազմավարկան ծրագրի հիմնարար արժեքները, նպատակները՝ իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ, ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Պ. Ասիլբեկյանը

Նրանք նշեցին, որ ներկայացված տնտեսագիտության ֆակուլտետի միջնաժամկետ 2016-2018 թթ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց -պլանի նախագիծը բխում է 2016-2020 ԵՊՀ Իմ ռազմավարական ծրագրից և առաջարկեցին ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

Որոշեցին - հաստատել ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի միջնաժամկետ 2016-2018 թթ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց -պլանի նախագիծը և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

2.Լսեցին -Հ. Մարզպանյանին

«Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ Հ. Մարզպանյանը նշեց, որ ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն անհրաժեշտ է քննարկել և հաստատել «Տնտեսագիտություն» մասնագիտության 2016 – 2020 ուսումնական պլանի նախագիծը: Նկատի ունենալով, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը առաջնորդվում է ԵՊՀ –ի համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլաններով, ուստի մասնաճյուղի «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնը կարող է առաջնորդվելով ԵՊՀ համապատասխան մասնագիտության ուսումնական պլանով:

Արտահայտվեցին - Գ. Միրոյանը, Գ. Ավետիսյանը

Նրանք նշեցին, որ ներկայացված 2016 - 2020 «Տնտեսագիտություն» մասնագիտության ուսումնական պլանի նախագիծը համապատասխանում է ներկայացվող պահանջներին և առաջարկեց ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

Նիստի մասնակիցների կողմից առաջարկություններ և դիտողություններ չեղան, ընդհանուր առմամբ ներկայացված 2016 – 2020 ուսումնական պլանի նախագիծը համարեցին համապատասխան «Տնտեսագիտություն» մասնագիտության պահանջներին:

Լսեցին - Գ. Հովհաննիսյանին

Ամբիոնի վարիչի Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ <<Սերվիսի >> մասնագիտության 2016-2020 թթ.ուսումնական պլանի նախագիծը: Նա ավելացրեց, որ 2016-2020 թթ. Ուսումնական պլանում, ամբիոնի դասախոսների առաջարկությունների հիման վրա, նպատակահարմար է գտնվել ընդհանուր մասնագիտական դասընթացի կրթաբլոկում կատարվել մի շարք փոփոխություններ. կատարվել է 11 կրթական մոդուլների փոփոխություն: Նախորդ ուսումնական պլանի համեմատությամբ կամընտրական կրթաբլոկի մասնագիտական դասընթացների քանակը 4-ից դարձել է 16:

Արտահայտվեցին- Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյանը

Ա. Պոտոսյանը նշեց, որ 2016-2020 «Սերվիս» մասնագիտության ուսումնական պլանի նախգծի հիմքը հանդիսացել է ԵՊՀ «Աշխարհագրության և երկրաբանության» ֆակուլտետի համապատասխան մասնագիտության ուսումնական պլանը, որի քննարկմանը մասնակցել են նաև մեր ամբիոնի դասախոսները, որոնք համատեղությամբ աշխատում են ԵՊՀ Իմ-ում: Ներկայացված 2016 - 2020 ուս. տարվա «Սերվիս » մասնագիտության ուսումնական պլանի նախագիծը համապատասխանում է ներկայացվող պահանջներին և առաջարկեց ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի «Տնտեսագիտություն» և «Սերվիս» մասնագիտությունների 2016-2020 ուս. տարվա ուսումնական պլանների նախագծերը և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

3. Լսեցին - Հ. Մարզպանյանին

Հ. Մարզպանյանը նշեց, որ 2016-2017 ուս. տարվա «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ երեք տարիների ուսումնական պլաններից, իսկ առաջին կուրսի ուսումնական աշխատանքային պլանը՝ 2016 - 2020 ուս. տարվա «Տնտեսագիտություն» մասնագիտության ուսումնական պլանից :
2016 - 2017 աշխատանքային ուսումնական պլանների ժամանակին քննարկման և հաստատման հարցը շատ կարևոր է ամբիոնի աշխատանքների կազմակերպման համար, որովհետև դրա հիման վրա պետք է անմիջապես սկսել ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների աշխատանքները:

Նա նշեց, որ 2016 - 2017 աշխատանքային ուսումնական պլանների նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին և կարելի է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Լսեցին - Գ. Հովհաննիսյանին

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2016-2017 ուս տարվա «Սերվիս» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ չորս տարիների ուսումնական պլաններից:

Արտահայտվեցին - Գ. Միրոյանը, Վ. Առաքելյանը

Արտահայտվողները նշեցին, որ ներկայացված աշխատանքային ուսումնական պլանների նախագծերը ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին և կարելի է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Որոշեցին – հաստատել ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն», «Տնտեսագիտություն» և «Սերվիս» մասնագիտությունների 2016-2017 ուս. տարվա ուսումնական աշխատանքային պլանների նախագծերը և ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:

Գիտխորհրդի նախագահ *Ն. Խուդավերդյան*

Քարտուղար *Ա. Սարիբեկյան*